

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԶՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 112

«19» օգոստոսի 2015թ.

ք.Իջևան

§ 1

**Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման
2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի
ուսումնական գործընթացի կազմակերպման
ժամանակացույցը հաստատելու մասին**

Հաստատել մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը.

**1. Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման
2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի
ժամանակացույց**

1. Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել ա/թ սեպտեմբերի 1-ից:
2. 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել ա/թ դեկտեմբերի 19-ին:
3. Առաջին ընթացիկ ստուգումներն ու քննություններն անցկացնել ա/թ հոկտեմբերի 12-ից-24-ը:
4. Երկրորդ ընթացիկ ստուգումներն ու քննություններն անցկացնել ա/թ դեկտեմբերի 7-ից - 19-ը:
5. 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել ա/թ դեկտեմբերի 14-ից - 26-ը:
6. 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել 2016թ. հունվարի 7-ից մինչև փետրվարի 24-ը:
7. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել 2016թ. փետրվարի 8-ից:

**2. Ֆակուլտետների կողմից Ուսումնամեթոդական վարչություն
փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց**

ՄԵՊՏԵՄԲԵՐ

- Մինչև ա/թ սեպտեմբերի 1-ը ներկայացնել ուսանողական նպաստներ և կրթաթոշակներ ստացող ուսանողների վերաբերյալ ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների արձանագրությունները՝ համապատասխան ցուցակներով:

- Մինչև ս/թ սեպտեմբերի 7-ը ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների փաստաթղթերը:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 21-ը ներկայացնել կրթաթոշակներ ստացող ուսանողների վերաբերյալ ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների արձանագրությունները՝ համապատասխան ցուցակներով:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 23-ը ներկայացնել տվյալներ՝ ուսանողների շրջանում հարցման թերթիկները նախապատրաստելու համար:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 23-ը ներկայացնել ընթացիկ քննությունների ժամանակացույցերը:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 23-ը ներկայացնել 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

- Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել 3-ԳՄ /HK/ հաշվետվությունը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել ուսանողների շրջանում հարցումների անցկացման ժամանակացույցը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 16-ը ներկայացնել 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակում պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը:

ՂԵԿՏԵՄԲԵՐ

- Մինչև ս/թ դեկտեմբերի 1-ը ներկայացնել քննաշրջանի ժամանակացույցը:

ՀՈՒՆՎԱՐ

- Մինչև 2016թ. հունվարի 30-ը Ուսումնամեթոդական վարչություն ներկայացնել 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի դասատախտակները:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցերում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների:

§ 2

Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը հաստատելու մասին

Հաստատել մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը.

1. Բակլավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն իրականացնել ա/թ նոյեմբերի 2-ից - 28-ը, իսկ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ՝ նոյեմբերի 2-ից մինչև հունվարի 23-ը ժամանակահատվածներում:
2. 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի 1-ին ընթացիկ քննություններն ու ստուգումներն անցկացնել ա/թ նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 12-ը, իսկ երկրորդ ընթացիկ քննություններն ու ստուգումները՝ 2016թ. հունվարի 11-23-ը ժամանակահատվածներում:
3. Առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել 2016թ. հունվարի 25-ից մինչև մարտի 19-ը ժամանակահատվածում:

1. Հեռակա ուսուցման բաժնի կողմից Ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

- Մինչև ա/թ սեպտեմբերի 22-ը ներկայացնել 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:
- Մինչև ա/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել ուսանողների շրջանում հարցումների անցկացման ժամանակացույցը:
- Մինչև ա/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը:
- Մինչև ա/թ հոկտեմբերի 15-ը ներկայացնել 3-ԳՄ /HK/ հաշվետվությունը:
- Մինչև ա/թ նոյեմբերի 16-ը ներկայացնել 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակում պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը:
- Մինչև ա/թ դեկտեմբերի 25-ը ներկայացնել քննաշրջանի ժամանակացույցը:
- Մինչև փետրվարի 8-ը Ուսումնամեթոդական վարչություն ներկայացնել 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի դասատախտակները:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

ՏՆՕՐԵՆ՝ Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝ Վ.Ս.ԵԳԱՆՅԱՆ